



ՀՌԻՓՍԻՄԵ ՍԵՐԻՆԿՅՈՒԼՅԱՆ

ՀՈՒՇԵՐ ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ՄԱՍԻՆ*

Գրիգոր Զոհրապի պես մեծ մտքի տեր և հանճարեղ անձնավորութեան մասին գրելու համար, պետք է գրիչ ունենալ և ոսկի գրիչ, իսկ իմս մատիտ է անգույն, բայց որովհետև իրարու շատ մոտ մարդիկ ենք եղած և ամեն օր հանդիպած, մանավանդ որ տղայիս կնքահայրն էր, փորձեմ հուշերես բան մը թողուլ սա թուղթին, որ մնա անկորուստ:

Զոհրապ միջահասակ, բավական լեցուն կազմվածքով, կլոր դիմագծերով, ուշագրավ տեսքով, շարժումներով աշխույժ մեկն էր, զննող, նկատող հայացքով, այնպես կդիտեր շուրջը, որ կարծես գրելու նյութ կհավաքեր: Արտաքննապես միշտ շատ ճաշակավոր, անգլիական ամենաազնիվ բրդեղեն կտորներով կոստյումներու մեջ և ամեն ինչ հազվածին համապատասխան, բաճկոն, փողկապ, թաշ-

կինակ և այլն, և այս բոլորը շատ անփուլթ ձևով, կարծես ինքնիրենը եղած ըլլար:

Պերճաբան էր Զոհրապ, բառի ամենալայն իմաստով, ճիշտ այնպես կխոսեր, ինչպես որ կգրեր: Ուր որ ալ ըլլար՝ խորհրդարան, ազգային երեսփոխանական ժողով, որևէ ընկերական հավաքույթ, գրական երեկո, իրենց տունը, մեր տունը, երբ Զոհրապն էր խոսողը, բոլորը կլռեին և բերանաբաց կլսեին: Ան կնկարեր, կբանդակեր կարծես իր պատմածը:

Ամեն նորութեան, ըլլա գրական, գիտական, գեղարվեստական, քաղաքական, անմիջապես կտեղեկանար, ոչ միայն իր ապրած երկրին մեջ, այլև ամբողջ աշխարհի մեջ և իր հեղինակավոր կարծիքը կհայտնէր այդ մասին:

Բնակարանը, Բերա թաղամասի Այադփաշա փողոցի ծովահայաց մեծ տան մը մեջ, վերևի 4-րդ հարկը, սքանչելի տեսարան ուներ: Ննջարանի պատշգամբն, պատուհաններն ցույց կուտար շոգենավերու, նավակներու, մակույկներու անընդհատ լողալ-երթևեկը: Կյանքին հետ համեմատելով:

Աշխատասենյակը կգտնվեր մուտքի դռան ճիշտ դիմացը, ոչ շատ մեծ, պատերը մինչև առաստաղը գրապահարաններ՝ փառակազմ գրքերով: Գրասեղանը նույնպես ոչ մեծ, մանաազնիվ փայտեղենով շինված, վրան ամեն ինչ գեղարվեստական՝ թանաքաման, գրիչ, մատիտ, թերթահատ, արձանիկներ և այլն: Կսիրեր առհասարակ դուռը բաց աշխատիլ, գրասեղանին առջև, կբաժ թուղթե-

* «Էջմիածին» ամսագրի խմբագրութեանն ենք ներկայացնում հայ մեծանուն գրող Գրիգոր Զոհրապի մասին գրած ակնատեսի տիկին Հռիփսիմե Սերիկյուլյանի շատ կողմերով ուշագրավ հուշերը: Տիկին Հ. Սերիկյուլյանը լինելով գրողի մտերիմ ընկերոջ՝ Վարդգեսի կինը, հաճախ, Պոլսում ապրած տարիներին, ելումուտ է ունեցել նրանց տանը, մոտ կապերի մեջ է եղել ընտանիքի հետ, ականատես է եղել նրանց նիստուկացին, Զոհրապի ձերբակալութեան և քստորվելուն, ընտանիքի տառապանքներին:

Տիկին Հ. Սերիկյուլյանը փր հուշերը Քբիլիսիից ուղարկել է գրականութեան և արվեստի ֆանդարան: Հուշերը ընագիրը պահվում է Գրիգոր Զոհրապի արխիվային փոթրիկ ֆոնդում:— Գ. Ազյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ




Է. ԱԿՈՒՆՅԱՆ



Կ. ԽՈՒՐՈՒՄՅԱՆ



Մ. ԱՅԿՈՒՆՅԱՆ




Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ



Ս. ԱՅԿՈՒՆՅԱՆ



Մ. ԱՅԿՈՒՆՅԱՆ



Գ. ԱՅԿՈՒՆՅԱՆ



Մ. ԱՅԿՈՒՆՅԱՆ



Գ. ԱՅԿՈՒՆՅԱՆ



Ս. ԱՅԿՈՒՆՅԱՆ



ն վրա, պենսնեն քթին: Իրենց այցելելու
 մեծերուն, երբ կտեսնեինք զինքը այդ դիր-
 վ, արագ մը կանցնեինք և կմտնեինք հյու-
 մանեցակ: Մեր դալեն քանի մը բուսե անց,
 արագ եռանդով բարեկեր մեզ: Ներողու-
 մուն կխնդրեինք իրմե որ զինքը խանգարե-
 զք: «Մինչև ետքը թուղթերու հետ միս-
 սանակս մնալու շնմ վերջապես», — կպա-
 տխաներ: Կսկսեր պատմել, կատակել:
 Հասարակ խոսակցությունը միշտ համեմ-
 ճ էր սրամիտ կատակներով: Ամենասովո-
 լական դեպքը կպատմեր գունագեղ: Իր ա-
 պարանքին մեջ, տարբեր ձևով շտապ մը
 պատկերելու: Մեծ հաճույքով կսեինք
 քնքը, կամ, ավելի ճիշտ, կտեսնեինք պատ-
 եմները:

Քրիստոսի ցուցահանդեսն վերադարձին,
 մե շնմ սխալիք՝ 1914 թվականին, արձան մը
 որած էր՝ սպիտակավարդազույն մարմարի
 աս քանդակված ոչխարներու հոտը, հովիվը
 ասսին: Արձանը տեղավորեր էին պատու-
 մանին մեջ, ժանյակավոր վարագույրին
 մե, ելեկտրական լույսին տակ, ուր ավելի
 շայտուն, ավելի գեղեցիկ կերևար ան: Զոհ-
 րայ մեզի ցույց կուտար արձանը ըսելով.
 Նշ ճիշտ մտահոյացում և մատներու ի՞նչ
 արք ճարպիկություն պետք է, սա անխոս
 արմարին այս կյանքը տալու համար: Ոչ-
 արներու գեղմը կշոշափես ավիդ մեջ, ան-
 ն հովիվը տիրական կանգնած, խուզար-
 ան հայացքը նետած հեռուն, պահապան
 ամփոռ ոտքերուն առջև: Քանդակագործին
 տքին ավելի նուրբ ու համառ աշխատանքն
 քանահատելի: Զոհրայ առհասարակ ամեն
 անի վրա թափված աշխատանքն էր որ
 անհատեր:

Ամբողջ քնակարանը նման էր գեղարվես-
 փ թանգարանի մը: Ընտանիքով բոլորը՝
 անը՝ Կլարան, աղջիկները՝ Դոլորես և Հերմի-
 ան, տղաները՝ Լեոն և Արամ վերին աստի-
 անի նուրբ և գեղեցիկ ճաշակի տեր մարդիկ
 ան: Ներս մտնողը շէր գիտեր ո՞ր նկարին,
 որ արձանին, ո՞ր գեղեցիկ ծաղկամանին
 ոչև կանգներ ու դիտեր հիացումով: Ճա-
 արանի պատերը ծածկված էին էդգար Ե-
 րանի ձեռակերտ նկարներով: «Որչափ շար-
 ուն կյանք կա բոլորին մեջ և համառ, տո-
 ռուն աշխատանք», — կըսեր Զոհրայ:

Որեւէ անձաշակ բան կամ ոչ ճիշտ երևույթ
 տեսնելով կավելցնեին. «Բարբարոս ձեռով մը
 զղած է»: Մեծ մտածողը կարո՞ղ էր գուշակել,
 որ այդ «բարբարոս» ձեռը իր վրա պիտի գոր-
 ջարդվեր և ինք պիտի նահատակվեր բարբա-
 րոսաբար:

Տան մեջ մանուկի մը պես կխնամեին զին-
 քը, ամեն ինչ նախապես մտածված՝ սնունդ,
 անգիտ, հագուստ և ամեն բան: Երբեմն

կբողոքեր. «Ձգեցեք անգամ մըն ալ ուզածիս
 պես շարժիմ, ուզածս ընեմ», — կկատակեր
 հաճախ այդ մասին և մենք բոլորս կծիծա-
 դեինք:

Կիրակի օրերը կսիրեր ոտքով երկար
 պտույտներ ընել մեծ աղջկան՝ Դոլորեսի
 հետ: Բավական հեռու կպարեինք մենք:
 Սովորականն տարբեր, ուժեղ զանգահարու-
 մով մը ներս կմտներ և դեռ միջանցքին մեջ
 «սատե մը» կպատվիրեր («սատե», թուրքե-
 րեն, կնշանակե «միայն, զուտ»), այսինքն
 սուրճ առանց շաքարի: Հազիվ նստած,
 կպատմեր իր տպավորություններն կամ նոր
 պատահած դեպքեր մը:

Իրավաբանական ասպարեզին մեջ առա-
 ջինն էր. ինչ դատ որ ստանձներ, անպայման
 պետք է շահեր: Փաշայի մը շատ խճճված
 դատը ստանձնեց, շահեցավ, փաշան շնոր-
 հակալ եղավ մեծ վարձատրությամբ: Ինքն
 ալ նույն առատաձեռնությամբ կծախսեր ա-
 մենուն վրա, ամեն բանի համար:

Իբրև իրավաբան կցված էր ուսական դես-
 պանատան հետ: Կսիրեր ուսերը, «Անոնք
 շիտակ մարդիկ են, մեզի պես չեն», — կըսեր:
 Դեսպանատան զինվորական կցորդը շատ
 մոտ էր Դոլորեսին, զոր կսիրեր, բայց որով-
 հետևե դիվանագիտական ասպարեզին մեջ
 աշխատողը իրավունք չուներ ամուսնանալու
 օտարահպատակ աղջկան հետ, խոստացած
 էր երթալ, ձգել պաշտոնը, վերադառնալ և
 կապվիլ ամուսնությամբ: Գնաց և ուղացավ:
 Ազգված էին ընտանիքով, հայր ու աղջիկ
 մանավանդ, իսկ հետո պատերազմն սկսավ
 և ամեն ինչ այլ ձև ստացավ արդեն:

Զոհրայ լիովին վստահ էր ուսերուն հաղ-
 թանակին: «Արևելյան սահմանազուխին վրա
 ուզվական ուժ չունինք», — կըսեր: Այդպես
 ալ եղավ: Կոհվն սկսելին քիչ վերջ, ուսա-
 կան բանակը մտավ Տաճկաստան, բայց,
 արևո՞ւս, նահանջեց, գրեթե իսկույն, որմե
 հետո ոճրագործ իթթիհադականները (օս-
 մանյան կառավարության ղեկավար կուսակ-
 ցությունը) սկսան իրագործել նախապես
 ծրագրված հայերու բնաջնջումը, աննախըն-
 թաց բռնագաղթով: Զոհրայի տրամադրու-
 թյունը փոխվեցավ բոլորովին. մտախոհ,
 ծանր տեսք ուներ: Իսկ երբ 1915 թվականի
 ապրիլ 24-ի գիշերը ձերբակալություններ
 եղան Պոլսի մեջ, մտավորականներու մեծ
 մասը ձերբակալվեցավ և հաջորդ օրն իսկ
 քարոզվեցավ, Զոհրայ ամեն օր ամուսնուս՝
 Վարդգեսին հետ կղիմեր «նեզարեթ»-ները
 (մինիստրություն), ինչպես և գլխավոր ոս-
 տիկանապետ Բեդրի բեյին ու բացատրու-
 թյուն կպահանջեր անմեղ մարդոց հանդեպ
 կատարված հալածանքներուն համար: Մինչև
 որ... գիրենք ևս ձերբակալեցին մայիս 20-ի

երեկոյան, ազատվելու համար բողոքներին, և հաջորդ օրը, առավոտ կանուխ, քարոզեցին սևածիր ճամբաներով...:

Զոհրապի գրական գործունեության մասին չեմ համարձակիր բան մը ավելցնել, քանի որ Մինաս Հյուսիսը և ուրիշներ այնքան ձեռն-հասորեն ուսումնասիրած են անոր գրական ժառանգությունը: Ըսեմ միայն, որ ինքը՝ մեծ Զոհրապը, ոչ մեկ կարևորություն կուտար իր գրվածքներուն: «Կյանքն պզտիկ նոթեր, պզտիկ պատկերներ են անոնք», — կըսեր, — ես ամառուոր մըն եմ միայն գրական ասպարեզին մեջ»: Ականջիս մեջ կհնչե դեռ իր համեստ արտահայտությունը:

Զոհրապը ճանչցեր եմ 1911 թվականին, երբ ամուսնութեանս առթիվ փոխադրվեցա Պոլիս: Քանի մը օր էր որ հասած էինք Պոլիս, դեռ ոչ բոլորովին տեղավորված: Զոհրապ հրավիրեց մեզ ճաշի, թեև կինը բացակա էր, Եվրոպա գացած ըլլալով: Ինքը Զոհրապ, տղան և փոքր աղջիկը ընդունեցին մեզ: Առաջին պահին այնպես շերմ սիրալիրութեամբ դիմավորեց մեզի, կարծես հիննն մտաբարեկամներ եղած ըլլայինք, և այդպես մնացինք մինչև վերջին օրը: Հիսուն տարեկան էր այն ժամանակ, թեև մազերը բոլորովին սպիտակած, բայց երիտասարդի աշխույժ և ավյուն կար բոլոր ձևերուն մեջ: Հետաքրքրութեամբ հարցեր կուտար, պատմել կուտար գավառի՝ էրզրումի կյանքն, դպրոցներու մասին և այլն: Ես ալ կպատասխանեի տեսակ մը քաշվելով, երևի երիտասարդ տարիքիս պատճառով:

Շարժապատկերի պատճառին պես տեսողութեանս առջև կսահի վերջին պահը, երբ առավոտ կանուխ գացի Միրքեջիի կայարան ճանապարհելու գիրենք: Ամուսինս հաջողի էր բացառիկ թույլտվություն ձեռք բերել, որ ճանապարհելու երթամ: Ոստիկաններով շրջապատված, փոքր սենյակի մը մեջ, նստած էին Զոհրապն ու Վարդգեսը տախտակե բազմոցին վրա, անհայտին առջև հուսաբեկ արտահայտութեամբ: Կոշիկներուն կուճակները կոճկված չէին, մազակայս տվի, որ կոճկե: «Այդպես ալ մնա նե, ի՞նչ հոգ», — ըսավ: Հրամայեցին, որ թուրքերեն խոսի: Քանի մը խոսք ըսավ տիկնոջ հաղորդելու: Հազիվ կես ժամ անցած, տարին, նույնպես ոստիկաններով:

Տարին... անանուն ճանապարհներով, ուղընչացնելու համար հայ մտքի, գրչի, գաղափարի այլ տիտաններու հետ:

Ձերբակալութեան հաջորդ օրը, Զոհրապի կինը, գուլար կորսնցուցած, կղիմեք աջ ու ձախ պաշտպան գտնելու, ամուսինը ազատելու և վերադարձնելու համար: Գերմանա-

կան դեսպանատուն, խորհրդարանի նախագահին, վարչապետին և ուրիշ ժանոթներու կատարված դիմումները անցան իզուր, ոչ ոք օգնեց, ոչ մեկ բան ընել ուզեցին:

Օսմանյան խորհրդարանի այն ժամանակ վա նախագահ հալիլ բեյը Զոհրապի մոտ ապաստաններ էր, երբ Իթթիհատը կհալածվեց Իթիլաքեն (իրարու հակառակ կուսակցություններ): Խալիլ բեյը հալածանքի օրերու շունչը առեր էր Զոհրապի տունը և երկու շաբաթն ավելի պահվեր էր անոր մոտ, մինչև հաջողացուցեր էին զայն գաղտնի հեռացնել Պոլսն: Նույն այդ նշույթով խալիլը «Ոչ մեկ բան ընել չեմ կարող», — պատասխաններ էր Զոհրապի կնոջ: Իսկ երբ Կլարան վարչապետին դիմեց որպես ծանոթ, ըսելով, որ «Իմ ամուսինը հեղափոխական չէր, ոչ մեկ կուսակցության կապականներ, այս հայրածանց քին պատճառն ի՞նչ է», — վարչապետը անապատեց անոր պատասխաններ էր: «Զե՞ք գիտեք ինչ որ թաց խոտն ալ չորին հետ կվառի»:

Ճիշտ նույն պատասխանը, նույն բառերու գրեր էր Բաֆֆին իր «Վայծեր»-ուն մեջ, 70 տարի առաջ, երբ Ասլան կըողոքեր Վանի վառլին, անմեղ մարդոց դեմ կատարված հալածանքներուն համար:

Արևմտահայերու ճակատագիրը դարերն վեր դառնագինորեն նույնն է եղած:

Զոհրապ հաջողի էր ճանապարհեն մեկ վերկու նամակ և հեռագիր մը հասցնել տունը: Իսկ երբ այդ ևս դադարեցավ, ընտանիքը մնաց առանց լուրի: Կլարան օրը քանի մը անգամ հեռախոսով կհարցներ, թե ո՞րտեղ կգտնվե, ամուսինը, որմե ինքը ոչ մեկ լուր ուներ: Ոճրագործները պատասխաններ էին. «Զոհրապ յուրա օյմյուշ» (Զոհրապ ճանապարհին մեծ ունի է):

Անկարելի է նկարագրել սոսկալի հարվածը ազդեցությունը Զոհրապի ընտանիքին վրա: Անհնար է երևակայել ընտանիքի պարած մեծ վիշտը: Հաջորդ օրն իսկ ուզեցին մահադատու տալ, հոգեհանգիստ կատարել, բայց արդգիլեցին: Նման ոճրագործության վրայնեմ պետք էր լուելայն անցնիլ:

Արտասուքներու հեկեկանքին մեջն տիկին Կլարան ցույց կուտար Զոհրապի գրասենյանը, գրապահարանները, հանդերձադարանք և կհեկեկար. «Այս ամենը ձգեցիր, ո՞ւր գացիր, ես քեզ հիմա ո՞ւր պիտի գտնեմ...»:

Հիշողություններս, թեև փոքր, բայց փրական, թող մնա և թողիքին, իբր հիշատակ անմահ Զոհրապին: